ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/16-1-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
121	Վիրահատարանի առաստաղային լուսադիոդային լուսատու երկու գմբեթով	Վիրահատարանի առաստաղային լուսադիոդային լուսատու երկու գմբեթով	Վիրահատարանի առաստաղային լուսադիոդային լուսատու երկու գմբեթով	Տիպը՝ առաստաղին մոնտաժվող։ Գմբեթների քանակը 2-ից ոչ պակաս։ LED տիպի լուսային աղբյուրների առկայություն։ Գմբեթները կլոր, յուրաքանչյուր գմբեթում առկա լուսադիոդների խմբերի քանակը ոչ պակաս քան 6, ընդ որում յուրաքանչյուր խմբում լուսադիոդների քանակը ոչ պակաս՝ քան 18։ Յուրաքանչյուր գմբեթի տրամագիծը ոչ պակաս՝ քան 700մմ։ Լուսադիոդների ծառայության ժամկետը ոչ պակաս՝ քան 50.000 ժամ։ Լուսադիոդների ընդհանուր քանակը յուրաքանչյուր գմբեթում ոչ պակաս քան 108 հատ։ Յուրաքանչյուր գմբեթից 1մ հեռավորության վրա լուսավորվածությունը ոչ պակաս քան 160.000լք։ Վիրահատական դաշտում ջերմաստիճանի բարձրացում 0.5 °C –ից պակաս։ Վիրաբույժի գլխավերևում ջերմաստիճանի բարձրացում 1 °C –ից պակաս։

				Կախված վիրահատության առանձնահատկություններից՝ լուսատուի գմբեթների վրա առկա լուսադիոդների մասնակի ընտրողական անջատման/միացման հնարավորության առկայություն։ Լուսավորվածության կարգավորման ռեժիմների քանակությունը ոչ պակաս քան 8։ Ra ինդեքսը՝ 93-ից ոչ պակաս։ Պետք է ապահովի համասեռ լուսային դաշտ ոչ պակաս քան 1400մմ խորությամբ։ Լուսային դաշտի տրամագիծը՝ առնվազն 220-310մմ միջակայքի առկայություն։ Գունային ջերմաստիճանը՝ կարգավորման հնարավորությամբ։ Գունային ջերմաստիճանի ռեժիմների քանակությունը 3-ից ոչ պակաս, ընդ որում առաջին ռեժիմը 3800±500Կ, երկրորդ ռեժիմը 4400±500Կ, երրորդ ռեժիմը 5000±500Կ։ Էնդո ռեժիմի առկայություն։ Սենսորային վահանակից լուսատուի միացման / անջատման հնարավորության առկայություն։ Լուսատուի կարգավորման համար անհրաժեշտ կենտրոնական բռնակների առկայություն, որոնք պետք է լինեն ավտոկլավով մանրէազերծման ենթակա։ Յուրաքանչյուր գմբեթի ճառագայթման հոսքի մակերևույթային խտությունը ոչ պակաս քան 542 Վտ/մ2։ Գմբեթների կրող թևերի պտտման անկյունը ուղղահայաց առանցքի շուրջ ոչ պակաս քան 360 աստիճան, իսկ գմբեթների պտտման անկյունը հորիզոնական առանցքի շուրջ ոչ պակաս քան 90 աստիճան։ Յուրաքանչյուր գմբեթի էներգածախսը ոչ ավել՝ քան 80Վտ։ Սնուցում՝ 220Վ/50Հց։ Քաշը՝ ոչ ավել քան 85 կգ։ ISO9001, ISO13485 և CE Mark (Directive

				93/42/EEC) վկայականների առկայությունը պարտադիր է։ Սարքավորումը նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմանբ։ Լրակազմում ներառված են բոլոր այն պարագաները, որոնք անհրաժեշտ են լուսատուի մոնտաժման, լիարժեք շահագործման համար, մասնավորապես առաստաղին ամրացման դետալները, շահագործման ձեռնարկը։ Լուսատուների մոնտաժումը առաստաղին, կարգաբերումը, փորձարկումը, բժշկական անձնակազմին շահագործման եղանակների ուսուցումը և շահագործման հանձնումը պետք է կատարվի արտադրողի կողմից լիազորված մասնագետի կողմից։ Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից ոչ պակաս, քան՝ 12 ամիս։ Երաշխիքային ժամկետում ի հայտ եկած անսարքությունների (շահագործման կանոնների խախտման հետ չկապված) վերացումը պետք է կատարվի մատակարարի միջոցների հաշվին։ Սարքը տեղադրելուց հետո պետք է բերվի վերջնական աշխատանքային վիճակի։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО "Энерджи Груп" в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/16-1-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
121				